ОБЯЗАТЕЛЬНЫЙ
КОНТРОЛЬНЫЙ
ЭКЗЕМПЛЯР

ՀՈՒՇԱԹԵՐԹ

ՍՈՒՍԱՆԱԿՈՎ (ՏՐԻՊԵՐՈՎ) ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

616.9
Հ-92

ԱՌԺՈՂԿՈՄԱՏԻ ՍԱՆԼՈՒՍ ԲԱԺԻՆ

ՑԵՐԵՎԱՆ 1939 թ.

17.06.2013 7042

ՀՈՒՇԱԳԵՐԳ ՍՈՒՍԱՆԱԿՈՎ (ՏՐՈՊԵՐՈՎ) ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Սուսանակ հիվանդությունը չբարդացնելու և բուժումը հաջող տանելու նպատակով անհրաժեշտ է պահպանել հետևյալ կանոնները՝

1) Չխմել ոգի, գինի, գարեջուր և այլ վոդելից խմիչքներ:

2) Չխմել մուգ թեյ ու սուրճ, սեղտերյան ջուր, լիմոնադ և այլ ֆչչան ջրեր:

3) Ցերեկը ավելի շատ խմել կաթ, ջուր և բաց թեյ, իսկ քնելուց 4 ժամ առաջ դադարել ուտելուց և խմելուց:

4) Չուտել շատ աղի և թթու ուտելիք, ինչպես նաև սուր համեմունք-

61699 ար. 30 JUL 2010

ներ (տաքդեղ, ծովաբողկ, մանանեխ և սոխ):

5) Քնել փափուկ անկողնում և դիշերը տաք չհագնվել: Քնել նաև մեջքի վրա (յերեսը դեպի վեր) վորովհետև այդպիսի դիրքը սեռական դրդիռ է առաջացնում:

6) Ծանրություններ չբարձրացնել, խուսափել մարմնի ցնցումներից (թափահարում, ձիավարություն, վազք և այլն):

7) Ունենալ սեռական հարաբերություն:

8) Հիվանդության սկզբում և ուժեղ ծորանքի ժամանակ տաք բաղնիքում չլողանալ և վաննաներ չընդունել:

9) Որական մի քանի անգամ ջրով լվանալ սեռական որդանները, ավելի լավ է տաք ջրով և սրբել մաքուր չորի կտորով:

10) Ամեն անգամ սեռական որ-
գանները ձեռք տալուց հետո խնամ-
քով լվանալ ձեռները, վորպեսզի
աչքերը չվարակվեն սուսանակով
(տրիպերով), դրանից կարելի է կու-
բանալ:

11) Կրել լավ առդրված ամորձա-
կալ (սուսպենզորիյ):

12) Սուսանակով (տրիպերով) հի-
վանդանալու դեպքում անմիջապես
դիմել բժշկի և բուժումը, մանավանդ
լվացումը չըսկսել առանց բժշկի ցու-
ցումների:

13) Ծորանքի դադարումը դեռ չի
նշանակում, վոր հիվանդությունն
անցել է: Բուժումն ավարտել այն
ժամանակ միայն, յերբ բժիշկը հար-
կավոր համարի:

14) Սուսանակը շատ վարակիչ հի-
վանդություն է և վորպեսզի վարակն
ուրիշներին չփոխանցվի, չի կարելի

սեռական հարաբերություն ունենալ,
մինչև վոր բժիշկը չասի, թե հիվան-
դությունը բուժված է:

15) Մինչև վերջը չբուժված սու-
սանակը կարող է ձգձգվել յերկար
տարիներ և ծանր հիվանդություններ-
ի հասցնել թե տղամարդկանց և թե
կանանց:

16) Սուսանակով հիվանդ կանայք
հղիության ժամանակ, իրենց հիվան-
դության մասին պետք է նախազգու-
շացնեն մանկաբարձուհուն կամ բժշ-
կին, վորպեսզի կարելի լինի միջոց-
ներ ձեռք առնել մոր բարդություն-
ների և յերեխայի աչքերի վարակ-
վելու դեմ:

17) Սուսանակով հիվանդ կանայք
դաշտանի ժամանակ, ըստ հնարավո-
րության, պետք է լինեն անկողնում,
ներարկումներ չպետք է կատարեն,
բայց որական մի քանի անգամ տաք

ջրով լվանան արտաքին սեռական օրգանները:

18) Սուսանակով հիվանդ մայրերին՝ յերեխաներին չդնեք ձեզ հետ միևնույն անկողնում, ունեցեք առանձին պետքանոթ, ծայրապանակները, ներարկման դավաթները չտաք ուրիշներին, նախքան յերեխաներին լողացնելը կամ պետքանոթին նստեցնելը և այլն, խնամքով լվացեք ձեռները:

19) Աղջիկներն առանձնապես հեշտ են վարակվում իրենց հիվանդ մորից կամ հիվանդ դայակներից: Պահպանեցեք յերեխաներին:

20) Վեներոլոգիական հիմնարկները ցույց են տալիս բժշկական ոգնություն, կատարում են հետազոտություններ, տալիս են խորհուրդներ և ցուցումներ անխտիր բոլոր աշխատավորներին:

21) Ամոթ բան չէ սուսանակ ունենալը, սակայն դա լուրջ հիվանդություն է, որի դեմ բժիշկները կարող են հաջող պայքարել այն ժամանակ միայն, երբ հիվանդը կոգտագործի բժիշկների բոլոր ցուցումները:

22) Սուսանակով հիվանդացած յուրաքանչյուր վոք պարտավոր է վոչ միայն ինքը ճշտապահորեն ու կանոնավոր բուժվել, այլև անմիջապես բժշկին հայտնել այն անձի անունը, ազգանունը ու հասցեն, վորից ինքը (տղամարդ թե կին) վարակվել է: Հիվանդ տղամարդը կամ կինը դրանով ոգնած կլինի վեներոլոգիական հիմնարկներին, վեներական հիվանդությունների դեմ մղվող պայքարում:

23) Վեներական հիվանդությամբ սուրբիին վարա

ՀՀ Ազգային գրադարան
NL0271870

620 7042

վորը պատժվում է քրեական որենսդրքի 150-րդ հոդվածով: (Ագատագրկում մինչև 3 տարի):

Հայկական ԽՍՀ Առժողկոմատի
Մաշկա-վեներական ինստիտուտ

ՊԱՏ. ԽՄԲԱԳԻՐ՝ ԲԺ. Ն. ՑՈՒՋԱՆՑՅԱՆ

Գլավ. լիտոգրի 1197 պատ. № 758 տ. 3000

Հայկական ԽՍՀ ԺԿԽ-ին կից „Խ. Հ." հրատ. տպարան, Յերեվան